ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 օգոստոսի 2014 թվական N 35-Ա

ՖԵԼԻՔՍ ԱՓԻՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006թ. հունիսի 26-ի <Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին> թիվ 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով՝

կարգադրում եմ .

1.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ֆելիքս Ափինյանին ս/թ սեպտեմբերի 8-ից սեպտեմբերի 19-ը գործուղել Երևան՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, ՀՀ ՔԾԻՍ 2012թ. 914-Ա որոշմամբ հաստատված ծրագրով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ. օգոստոսի 26
ք. Իջևան